ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ» ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ապրիլի 16-ին Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետում կազմակերպվել է «Պատմամշակութային արժեքների պահպանության հարցը» թեմայով կլոր սեղան-քննարկում, որը նախաձեռնել են «Իրավագիտություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները: Քննարկմանը մասնակցել են ֆակուլտետի դեկան Ա. Խաչատրյանը, պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ Ն. Սարումյանը, ամբիոնից դասախոսներ և ուսանողներ:

«Մեր ժողովրդի ողջ պատմության ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող վայրերն ու դրանց պահպանությունը կարևոր նշանակություն են ունեցել: Մենք դատապարտում, պահանջում և կոչ ենք անում բռնազավթված տարածքներում գտնվող հուշարձանների նկատմամբ վանդալիզմի անհապաղ դադարեցում»,- նշել է պ.գ.թ., դոցենտ Ն. Սարումյանը:

Քննարկման ընթացքում ուսանողները հանդես են եկել զեկույցներով, որոնցում մասնավորապես ներկայացրել են միջազգային կազմակերպությունների դիրքորոշումը, հուշարձանների ու տեսարժան վայրերի պահպանման ուղղությամբ ներկայումս իրականացվող գործընթացն ու կատարել համապատասխան եզրահանգումներ:

«Հուշարձանները, լայն առումով, երկրի, ժողովրդի մշակութային ժառանգության մաս կազմող ստեղծագործություններ են: 2020թ. պատերազմի ընթացքում և դրանից հետո էլ Ադրբեջանի կողմից կոպտորեն խախտվել են միջազգային իրավունքի գրեթե բոլոր նորմերն ու մարդասիրական իրավունքները, վնասվել և նույնիսկ հիմնահատակ ոչնչացվել են մեր պատմական հուշակոթողները, ինչի համար, անշուշտ, պետք է պատասխանատվության ենթարկվեն»,- նշել է «Իրավագիտություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանող Արա Սարգսյանը:

«Հատկապես վերջին իրադարձություններից հետո մեզանից յուրաքանչյուրի համար օրակարգային է մշակութային ժառանգության պահպանումը, քանզի դրանք այն կոթողներն են, որոնք իրենց հնությամբ և արժեքով անգնահատելի ապացույցներ են մեր ժողովրդի ինքնության և բնիկ լինելու վերաբերյալ»,- նշել է «Իրավագիտություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողուհի Աստղիկ Բաբայանը:

ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ապրիլի 16 -ին հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանության օրվան ընդառաջ ԱրՊՀ մի խումբ ուսանողներ սանմաքրման և բարեկարգման աշխատանքներ են իրականացրել Ծաղկաշատ և Ռև համայնքների հուշարձանների և հանրային նշանակության տարածքներում: Պատշաճ տեսքի են բերվել նշված համայնքների մի շարք հուշարձաններ ու հանրային նշանակության տարածքներ: Նմանատիպ հանրօգուտ աշխատանքներն ուսանողների կողմից լինելու են շարունակական:

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Հասմիկ Խաչատրյան, լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ. (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 3
ԱՊՐԻԼ
2021

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐՈՂ ԴԱՎԻԹ ՍԱՄՎԵԼՅԱՆԻ ՀԵՏ

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվեց առցանց հանդիպում արդի գրող Դավիթ Սամվելյանի հետ: Հանդիպմանը մասնակցել են գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ Նոնա Դավթյանը, ամբիոնի դասախոսներ, ուսանողներ բանասիրական, բնագիտական, պատմության և իրավագիտության ֆակուլտետներից:

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ Նոնա Դավթյանը կարևորեց ազգային գրականության դերը՝ նշելով, որ միայն ազգայինն է մեր փրկությունը:

«Հանդիպման ընթացքում կարևորվեց ազգ-գրականություն միասնության հարցը, հատկապես մեր օրերում, երբ այն ունի կարևոր նշանակություն»,- նշել է բանասիրական ֆակուլտետի ՈւԳԸ փոխնախագահ Սոնա Մուսայելյանը՝ հավելելով, որ կարևորում է նման ձևաչափով հանդիպումների անհրաժեշտությունը, և առաջիկայում առցանց հանդիպումներ են նախատեսվում նաև ժամանակակից այլ գրողների հետ: Հարց-պատասխանների, քննարկումների միջոցով ուսանողները հեղինակին հղեցին տարաբնույթ հարցեր նրա ժողովածուներից, մասնավորապես՝ «Արտագաղթած կարոտ», «Հակաքաղաքական», «Զգուշացե՛ք, դռները չեն փակվում» գրքերի շրջանակներում: Դավիթ Սամվելյանը ևս իր հերթին շնորհակալություն հայտնեց հրավերի և կայացած առցանց հանդիպման համար:

«Միշտ ցանկանում էի հանդիպել ԱրՊՀ ուսանողության հետ, սակայն ինչ-ինչ պատճառներով չեղարկվում էր: Մոտ ապագայում պլանավորում եմ լինել Արցախում և անմիջական հանդիպում ունենալ ուսանողության հետ»,- նշել է Դ.Սամվելյանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Մանկավարժության և սպորտի ֆակուլտետում կազմակերպվել է ձեռքի աշխատանքների ցուցադրություն: Ցուցահանդեսին ներկայացված էին «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների աշխատանքները, որոնք պատրաստվել են «Տեխնոլոգիա» առարկայի շրջանակներում:

«Ցուցահանդեսում ներկայացված են ձեռագործ աշխատանքներ՝ կտորից և թելերից տարբեր տիկնիկներ, ասեղնագործ զարդարանքներ, շյուղագործ գլխակապեր, գուլպաներ, մաքրամե, գունավոր ապլիկացիաներ և այլ գործեր»,- նշել է ՏՄՄ 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Գասպարյանը:

«Այս աշխատանքները վկայում են, որ առարկայի շրջանակներում ուսանողները յուրացրել են դասընթացի կարողությունները և պատրաստ են դպրոցում տվյալ առարկան լիարժեքորեն դասավանդել»,- նշել է մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ է. Բաղդասարյանը:

Ցուցահանդեսը բացվել էր մայրության և գեղեցկության տոնի առթիվ:

«ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՈՒՍԱՆՈՂ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Ստեղծագործ ուսանող» խորագրով միջոցառում, որին մասնակցել են ֆակուլտետի տարբեր մասնագիտություններից ուսանողներ: Միջոցառման ընթացքում ուսանողները ներկայացրել են իրենց հեղինակային արձակ և չափածո ստեղծագործությունները՝ հայրենասիրական, պատերազմական, կարոտի և սիրո թեմաներով գրված:

Միջոցառմանը ներկա էին գրականության և լրագրության ամբիոնի դասախոսներ, ովքեր իրենց ելույթներում գոհունակություն են հայտնել ուսանողների ներկայացրած գործերի վերաբերյալ, խորհուրդներով ուղղորդել և ոգևորել երիտասարդ ստեղծագործողներին:

«Ասպարեզ է իջել մի սերունդ, որը գալիս է ոչ թե գրքերից, բանաստեղծություններից, այլ այսօրվա դժվարին, ողբերգական վիճակից»,-նշել է ամբիոնի դասախոս, բ.գ.դ, պրոֆեսոր, բանաստեղծ Ս.Խանյանը՝ հավելելով, որ հիացած է ուսանողների ստեղծագործական ձիրքով և խոստանում է իր առաջիկա գրքում տպագրել հնչած լավագույն ստեղծագործությունները:

«Միջոցառման նպատակը ստեղծագործող ուսանողներին բացահայտելն ու ներկայացնելն էր: Սա ևս մի առիթ էր՝ ծանոթանալու նրանց ներաշխարհին և հույզերին, հնարավորություն տալու ինքնադրսևորվելու և ոլորտի ավագ սերնդի ներկայացուցիչներից խորհուրդներ ստանալու համար»,- նշել է ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Ի.Առուստամյանը:

ԴԱՍ-ՍԵՄԻՆԱՐ՝ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ

Ապրիլի 23-ին Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցի կապակցությամբ Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան N2 դպրոցի 8-րդ դասարանի աշակերտների հետ կազմակերպվել է դաս-սեմինար՝ «Հայոց ցեղասպանության պատմական և իրավական կողմերը» թեմայով:

Նախաձեռնության մասնակից են դարձել «Իրավագիտություն» և «Պատմություն» մասնագիտություններից ուսանողներ, ովքեր հանդես են եկել ելույթներով՝ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, դրանց իրավական ու պատմական կողմերի և արդիականացման վերաբերյալ:

«Իրավագիտություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանող Արա Սարգսյանի խոսքով՝ Թուրքիան իր ցեղասպան քաղաքականությունը շարունակում է նաև այսօր՝ Ադրբեջանի ձեռքով, որի վառ ապացույցը եղավ 2020 թ. Արցախյան պատերազմը:

«Ի՞նչ խոսք կարող է լինել խաղաղասիրության մասին, եթե Բաքվում բացվել է ռազմավարի պուրակ, որն ակնհայտ հաստատում է Ադրբեջանում հայատյացության և թշնամանքի քարոզի պետական քաղաքականության առկայության փաստը»,-նշել է Ա. Սարգսյանը:

Ուսանողները պատասխանել են նաև աշակերտների հարցերին:

ԱրՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է «Startup Boost Week Vol7» ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

Ապրիլի 5-ից 11-ը կայացավ «Քաթը-լիսթ» հիմնադրամի կողմից իրականացված «Startup Boost Week Vol7» միջոցառումը, որին մասնակցել է նաև ԱրՊՀ-ն:

Արցախի պետական համալսարանի մի խումբ ուսանողներ «gg» ընկերության բացառիկ աջակցության շնորհիվ առաջին անգամ մասնակցեցին ծրագրին: Միջոցառումը հարթակ տրամադրեց ստարտափեր ստեղծելու և զարգացնելու համար՝ ուսանողներին տալով իրական փորձառություն և մրցակցային առավելություններ: Մեկշաբաթյա ծրագրի ընթացքում մասնակիցները միասին աշխատելու, թիմեր կազմավորելու, գաղափարներ հավաքագրելու և դրանք իրագործելու հնարավորություն ունեցան:

Միջոցառումը հյուրընկալեց 100-ից ավել ուսանողների՝ 8 առանցքային կենտրոններում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Երևան: ԱրՊՀ ուսանողները միջոցառման մասնակից դարձան առցանց եղանակով:

Մասնակից ուսանողները կազմեցին թիմեր, աշխատեցին փորձառու մենթորների հետ և ստացան մրցանակներ շահելու հնարավորություն՝ վերջին օրը ժյուրիի անդամներին ներկայացնելով իրենց գաղափարները:

«Startup Boost Week Vol7» միջոցառման արդյունքում ԱրՊՀ ուսանողների ներկայացրած ծրագիրն արժանացել է ժյուրիի մրցանակի և «gg» ընկերության կողմից դրամական պարգևի:

Միջոցառմանը համալսարանականների մասնակցության համակարգման ու կազմակերպման աշխատանքները իրականացվել են ԱրՊՀ ՈՒՀՏԱԿ բաժնի և ՈՒԽ կողմից:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ազատ Արցախ

Նորից գարուն է, նորից ապրիլ ու նորից արյուն,
Ինչո՞ւ միշտ արյուն, ինչո՞ւ միշտ ապրիլ,
Ինչո՞ւ եք այդքան անսիրտ մեր հանդեպ,
Ի՞նչ եք կորցրել մեր Մայր Արցախում:
Չե՞ք հասկանում, որ մենք չենք պարտվի,
Քանզի մենք մեր հողն ենք պաշտպանում,
Բայց դուք չգիտեք, որ հայն է ձեր դեմ,
Որը պատրաստ է իր արյան գնով
Մայր հայրենիքի պաշտպանը լինել:
Ու չենք թողնի, որ դուք վայրագորեն
Մեր հողը մտնեք ու ապականեք
Սուրբ տաճարներն ու խաչքարերը,
Մեր հավետ կանգուն ազատ Արցախը

Հայ զինվոր

Դու մայր Արցախի հզոր պաշտպանն ես,
Հայկի սերնդից եկած հսկան ես,
Հայրենիքի միակ հույսն ու պարծանքն ես,
Ու ամեն մանկան անվախ հերոսն ես:

* * *

Գնացին տղերքը էլ ետ չեկան,
Նրանց տարել է հրեշտակը պայծառ:
Կռվի թեժ պահին մարտիրոսվեցին,
Հողը գունեցին արյամբ սրբազան:
Կարոտ թողեցին մեր հիվանդ սրտում,
Եվ ընդմիշտ սպասում ցավով պարուրված:

Արևիկ ՍԱՅԻՅԱՆ
ՆԶՊ 1-ին կուրս